Արձանագրություն N 3
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/10-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 հուլիսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մելիքսեթյանը և Ն. Ավետյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ջրատարների վերականգնման շինարարական աշխատանքների գնման **ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/10-Ա** ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է գնահատող հանձնաժողովի 07.07.2022թ. թիվ 2 որոշմամբ պահանջված փաստաթղթերը:

Ընթացակարգի մասնակից «ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը:

Հանձնաժողովի որոշումը

Ընթացակարգի մասնակից «ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերում արձանագրվել են տեխնիկական վրիպակներ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվում «Չնախատեսված ծախսեր 1.5%» տողում հաշվարկված թիվը ներառված չէ «Ընդհանուր գումար» դաշտում լրացված թվում:

Հանձնաժողովը որոշեց.
«ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/10-Ա ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 2-ը հայտարարել չկայացած Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) և հրապարակել հայտարարություն, ընթացակարգը Չափաբաժին 2-ի մասով, չկայացած հայտարարելու մասին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/10-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասնակից «Ֆլորա Էներջի» ՍՊԸ-ին, հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա **21.07.2022 թվականին ժամը 11:30-ին**, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա 3-րդ հարկ նիստերի դահլիճ):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ..... Ս. Ասրյան

Անդամներ ..... Գ. Մելիքսեթյան

..... Ն. Ավետյան

Քարտուղար ..... Ա. Սարգսյան